ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2025 թվականի N 364-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1070-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Մասնակցին իր կենսաթոշակային հաշվում առկա միջոցներն ամբողջությամբ ստանալու պահանջ ներկայացնելու իրավունք տվող հիվանդությունների (վիճակների) ցանկը հաստատելու մասին» N 1070-Ն որոշման հավելվածում՝

1) 1-4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ձարկերակային գերճնշում III (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի I10-I13, I15 ծածկագրեր)՝ բարդացած գլխուղեղի ինսուլտով կամ սրտամկանի ինֆարկտով՝ բարդացած քրոնիկ սրտային անբավարարությամբ կլինիկամորֆոլոգիական դասակարգչով

Ստրաժեսկո-Վասիլենկո IIB փուլ և խիստ արտահայտված կլինիկամորֆոլոգիական դասակարգչով՝ Ստաժեսկո-Վասիլենկո III փուլ, ակնահատակի ախտահարումով՝ հիպերտոնիկ ռետինոպաթիա չորրորդ աստիճան ըստ Կեյտ-Վագեներ-Բարկերի դասակարգման (KWB), երիկամների ախտահարումով՝ ԵԽՀ 5-րդ փուլ, ֆունկցիաների խիստ արտահայտված խանգարումով, դեկոմպենսացված փուլում:

2. Սրտային անբավարարություն (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի I50 ծածկագիր)՝ IV ֆունկցիոնալ դասի (ՖԴ) ըստ Նյու-Յորքյան դասակարգման (New York Heart Association՝ NYHA)՝ բարդացած դեկոմպենսացիաներով:

3. Սրտի իշեմիկ հիվանդություն (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի I22 ծածկագիր)՝ բարդացած սրտամկանի կրկնակի ինֆարկտներով, կյանքին վտանգ սպառնացող սրտի ռիթմի և հաղորդականության խանգարումներով, որոնք պահանջում են ինվազիվ միջամտություն, այդ թվում՝ սրտի ռիթմը վարող (ՍՌՎ) սարքի կամ կարդիովերտեր-դեֆիբրիլյատորի տեղադրում:

4. Հաջող վերականգնումով սրտի կանգ (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի I46 ծածկագիր) կամ փորոքային տախիկարդիայի կրկնվող դեպքեր (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի I47.2 ծածկագիր), որոնք պահանջում են ինվազիվ միջամտություն, այդ թվում՝ կարդիովերտեր-դեֆիբրիլյատոր սարքի տեղադրում կամ կորոնար զարկերակի ռեվասկուլյարիզացիա:».

2) 5-րդ կետից հանել «, դեկոմպենսացված փուլում» բառերը.

3) 6-րդ և 7-րդ կետերից հանել «՝ դեկոմպենսացված վիճակ, ամոքիչ (պալիատիվ) օգնությամբ» բառերը.

4) 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

5) 12-րդ և 13-րդ կետերից հանել «II^0-» բառը.

6) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգի քրոնիկ պրոգրեսիվող կամ կայուն նյարդաբանական դեֆիցիտով հիվանդություններ (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի G00-G99, ծածկագրեր)՝ շարժողական ֆունկցիայի խիստ արտահայտված և կայուն խանգարումներով՝ հեմիպլեգիայով կամ պարապլեգիայով կամ տրիպլեգիայով կամ տետրապլեգիայով կամ հեմիպարեզով կամ պարապարեզով կամ տրիպարեզով կամ տետրապարեզով կամ ատաքսիայով կամ մկանային ռիգիդությամբ կամ անոթային թուլամտությամբ։».

7) 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին կետով՝

«14.1. Վիրահատական բուժում պահանջող ներգանգային անևրիզմաներ։».

8) 18-րդ կետում «III և IV փուլ» բառերը փոխարինել «II, III և IV փուլ» բառերով.

9) 19-րդ կետում «R1 (ուռուցքի ամբողջականություն), առաջացած ոչ արմատական բուժումից հետո» բառերը փոխարինել «պրոգրեսիա, հիվանդության կրկնություն (ռեցիդիվ)» բառերով.

10) 20-րդ կետում «Լյարդի ցիռոզ» բառերը փոխարինել «Լյարդի քրոնիկ հիվանդություններ, այդ թվում՝» բառերով.

11) 21-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

12) 22-րդ կետից հանել «, կախեքսիայի փուլում» բառերը.

13) 8-րդ բաժնի վերնագրում «ՎԱՐԱԿԻՉ» բառը փոխարինել «ՎԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՄ ԻՆՖԵԿՑԻՈՆ» բառերով.

14) 26-րդ կետը «(հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի B20.0-B 22.7, B23.2 ծածկագրեր)» բառերից հետո լրացնել «, եթե հակառետրովիրուսային բուժումն արդյունավետ չէ» բառերով.

15) 27-րդ կետից հանել «հյուծումով (կախեքսիայով), խիստ» բառերը.

16) 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«29. Աչքի, գլխուղեղի և կենտրոնական նյարդային համակարգի այլ հատվածների չարորակ նորագոյացություններ, աչքի և նրա հավելյալ ապարատի

բարորակ նորագոյացություններ, գլխուղեղի և կենտրոնական նյարդային համակարգի այլ բաժինների բարորակ նորագոյացություններ, աչքի քրոնիկ հիվանդություններ, բնածին գլաուկոմա, գլխի վնասվածքներ (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի C69-C72, D31, D33, H00-H59, Q15.0, S00-S09 ծածկագրեր) ուղեկցվող տեսողության սրության՝ զույգ աչքի տեսողության անվերադարձ բացակայությամբ:».

17) 31-րդ և 32-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31. Դիաբետիկ անգիոռետինոպաթիա (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի E10-E14†, H36.0* ծածկագրեր), ուղեկցվող տեսողության սրության իջեցումով, տեսողության սրության օպտիմալ կրելի շտկումով՝ մեկ աչքի տեսողության սրությունը 0,05 և ցածր, մյուս աչքի տեսողության սրությունը 0,4-ից ցածր կամ երկու աչքի տեսողության սրությունը 0,3-ից ցածր:

32. Աչքի և ակնակապճի վնասվածքներ, այդ թվում նաև ակնագնդի բացակայություն կամ կուրություն (հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի S05 ծածկագիր), ուղեկցվող տեսողության սրության իջեցումով՝ տեսողության սրության օպտիմալ կրելի շտկումով՝ մեկ աչքի տեսողության սրությունը 0,05 և ցածր, մյուս աչքի տեսողության սրությունը 0,4-ից ցածր կամ երկու աչքի տեսողության սրությունը 0,3-ից ցածր:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ